«ՂԱՓԱՆՑՎՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

Սյունյաց ազատամարտի 1724—1730 թթ. հատվածին վերաբերող հարցերը հայ պատմագիտության ամենավիճելի խնդիրներից են։ Վեճի կենտրոնում Դավիթ-բեկի և Մխիթար սպարապետի մահվան թվականներն են, ըստ այդմ՝ նաև Ղափանի ապստամբության տևողության խնդիրը։ Որոշ գիտնականներ կասկածի են ենթարկել «Ղափանցվոց պատմության» ժամանակագրական տեղեկությունների հավաստիությունը և պնդել են, որ Դավիթ-բեկն իր մահկանացուն կնքել է ոչ թե 1728 թ. (ինչպես հայտնում է «Պատմությունը»)[1], այլ 1725-ին կամ 1726-ի սկզբին, իսկ Մխիթար սպարապետը զոհվել է ոչ թե 1730 թ. (տե՛ս Համապատում, էջ 179. հմմտ. ՊՏԱ, էջ 142), այլ 1727-ին[2]։ Այս տեսակետը լրջորեն քննադատվել է[3], սակայն խնդիրը մնացել է «Պատմության» Գուլամիրյանցի 1871 թ. հրատարակության շրջանակներում, այդ պատճառով էլ բանավեճը համոզիչ արդյունքի չի հանգել։

Ինչպես նշել է Հ. Դ. Փափազյանը, «Ղափտնցվոց պատմության» հաղորդումները կասկածի ենթարկելու համար թյուր մեկնակետ է եղել մինչև վենետիկյան հրատարակությունը (1978 թ.) գոյատևած այն սխալ կարծիքը, ըստ որի «Պատմությունն» ամբողջությամբ թելադրել է Ս. Շահումյանը[4], որը 1724 թ. երկրորդ կեսին կամ 1725 թ. գերի էր ընկել և որոշ ժամանակ անց

---

1 *Տե՛ս Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց Սամուել վրդ. Արաքելեան, Վենետիկ—Ս. Ղազար, 1978 (այսուհետև՝ Պատմութիւն Ղափանցւոց), էջ 177. հմմտ. էջ 142։ Այս հրատարակության բնագրային մասը հոդվածիս շարադրանքի մեջ, համառոտագրություններով, հղելու ենք ըստ հետևյալ հատվածների. ՊՍԾ՝ Պատում Ստեփան Շահումեանի, էջ 119—130. ՊՏԱ՝ Պատում Տէր Աւետիք քահանայի, էջ 131—143. Համապատում՝ Համապատում բնագիր, խմբագրեց հ. Ղուկաս վրդ. Սեբաստացի, էջ 147—181. Զորացուցակ՝ Դավիթ-բեկի զորավարների ցանկը և Տեր-Ավետիքին նվիրված ներբողը, էջ 143—143։*

2 *Տե՛ս* П. Т. Арутюнян. Послание Мхитар бека русскому правительству.— *ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ), 1952, № 3, էջ 83—99: Նույնի՝* Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в. М., 1954, с. 258—260, 270—278. *Աշոտ Հովհաննիսյան. Դավիթ բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը.— «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1, էջ 102, 105—110։ Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 176—178։ Վ. Մ. Մարտիրոսյան. Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թթ.) Երևան, 1971, էջ 173—178։ Տե՛ս նաև Ն. Ադոնց. «Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմը և գաղափարախոսական արժեքը.—Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան). կյանքը, գրականությունը, հիշողություններ. Փարիզ, 1937, էջ 136—137։*

3 *Տե՛ս Ա. Միրզոյան. Մխիթար-բեկի կողմից ռուսական կառավարությանն ուղղված ուղերձի հարցի շուրջը.—ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1952, № 8, էջ 87—98։ Վ. Ռ. Գրիգորյան. Նանոթագրություններ.— Լեո, Երկերի ժողովածու. հ. 3, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 602—605։*

4 *Հ. Դ. Փափազյան. Դավիթ-բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրական ուժերի հետ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 1, էջ 90։*

հեռացել Հայաստանից ու մեկնել Վենետիկ։ Միաժամանակ, տարակույսների առաջացմանը նպաստել են նաև իրական պատմական փաստեր, որ են. ա) 1726 թ. մարտի 24-ին Մխիթար-բեկի (Մխիթար սպարապետի) ստորագրությամբ ռուսաց կայսրին հղված ուղերձը[5]. սա վերոհիշյալ գիտնականներին հիմք էր տվել ասելու, թե նամակի գրման պահին Դավիթ-բեկն արդեն կենդանի չէր. բ) Ղուլանենց Փարսադան-բեկի որդի Թաղիի 1746 թ. Աստրախանում դրած հիշատակարանը[6], որի համաձայն Դավիթ-բեկը վախճանվել էր ոչ բնական մահով (ինչպես ասված է «Պատմության» մեջ), այլ զոհվել էր կռվում. գ) Կրուշինսկու հաղորդումն առ այն, որ 1726 թ. «Մխիթարը երկրում (իմա՝ Ղափանում—Ա. Ա.) իշխան ընտրվեց և մեռոնով մելիք օծվեց»[7]։ Այս առիթով Հ. Դ. Փափազյանն իրավացիորեն գրում է. «Ս. Արամյանի՝ հրատարակությանը առընթեր կատարված ուսումնասիրությունը վերջնականապես հաստատում է, որ «Պատմության» այդ հատվածը (1725—1730 թթ.—Ա. Ա.) գրված է կռիվներին մինչև վերջը մասնակցած Տեր-Ավետիսի պատմածի հիման վրա (տե՛ս Պատմութիւն Ղափանցւոց, Առաջաբան, էջ 77—85)։ Ուստի, ավելի ստուգապատում կարող է լինել, քան դեպքերից շուրջ երկու տասնամյակ անց, հեռավոր Աստրախանում, թեկուզ և ազգակից, սակայն իրադարձություններին մոտիկից անհաղորդ, Ղուլանենց Թաղիի՝ բերնեբերան անցնելով տեղ հասած և պատահականորեն հիշատակարանում գրի առնված տեղեկությունները։ Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ Ղուլանենց Թաղիին «չհավատալու հիմքեր չունենք»։ Այսպես կարելի էր մտածել այն դեպքում, եթե գոյություն չունենար շարժման ամբողջ ընթացքում մարտերի անմիջական մասնակից, Դավիթ-բեկի մերձավորագույն զինակից Տեր-Ավետիսի մեր կարծիքով առավել արժանահավատ վկայությունը։ Ինչ վերաբերում է Կրուշինսկու՝ նույնպես միջնորդաբար հաղորդած տեղեկություններին Մխիթար-բեկի օծման վերաբերյալ, ապա պետք է ասել, որ դա բոլորովին էլ հիմք չի տալիս պնդելու, թե օծումը տեղի է ունեցել անպայման Դավիթ-բեկի մահից հետո և որպես նրան փոխարինողի»[8]։

Ի պաշտպանություն «Պատմության» խնդրո առարկա տեղեկությունների հավաստիության, ինչպես նաև նրանց վերաբերող՝ մութ մնացած պատմական ծալքերի առավել ճշգրիտ և խորը բացահայտման համար, ստորև ներկայացնում ենք մեր դիտարկումները ևս։

* * *

Ա. 1725 թ. թուրքական զորաբանակների առջև դրված գլխավոր խնդիրն Ատրպատականի, Գանձակի, Կազվինի, Լուրիստանի և Սպահանի գրավումն էր։ Բացառությամբ Սպահանի, 1725 թ. վերջին թուրքերը գրավեցին նախանշված գրեթե բոլոր վայրերը[9]։ Հասկանալի է, որ այս ամենը նրանցից

---

5 Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов. Т. II, ч. II, под редакцией Аш. Иоаннисяна. Ереван, 1967 (այսուհետև՝ շարադրանքի մեջ՝ АРО. II), док. 335. 336.

6 Տե՛ս Армянское войско в XVIII веке: из истории армяно-русского военного содружества (исследование и документы). Подготовил к изданию А. Н. Хачатрян. Ереван, 1968, док. 79, с. 237—238, 451—452. հմմտ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5794, էջ 209ա—210բ։

7 Աշ. Հովհաննիսյան. Դավիթ բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը, էջ 106—107։

8 Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 90։

9 Տե՛ս Jonas Hanway. An Historical Account of the British Trade over the Caspian Sea. The second edition, revised and corrected. Vol. II, London, 1754, pp. 236—240; Judasz Tadeusz Krusinski. The History of the Late Revolutions of Persia. Vols. 1 and 2. New York, 1973 (Լոնդոնի 1740 թ. հրատարակության վերատպու-

պահանջում էր ուժերի գերագույն լարում. միայն Թավրիզի գրավման համար մղված մարտերում (1725 թ. հուլիս-օգոստոս) օսմանցիները կորցրեցին 20 000 մարդ[10]։ Օսմանյան բանակները լուրջ կորուստներ կրեցին նաև Շիրվանում (թուրք զինվորները, չդիմանալով տեղի կլիմայական ծանր պայմաններին, զանգվածաբար դիմում էին դասալքության) և, հատկապես, Սպահանի ուղղությամբ Բաղդադի փաշա Ահմեդի գլխավորությամբ կատարված արշավանքի ժամանակ[11]։ Ուրեմն պարզ է, որ 1725 թ. օսմանցիներն ի վիճակի չէին բավականաչափ ուժեր տրամադրելու Արցախ-Սյունիքի նվաճման բարդ խնդիրը գլուխ բերելու համար. դա կարող էր զգալիորեն արդելակել դեպի Իրանի խորքերը կատարվող ե արագություն պահանջող վերը նշված առաջխաղացումը։ Հավանորեն, թերագնահատելով ընդվզած Լեռնահայաստանի դիմակայելու կարողությունները, նրանք կարծում էին, թե Ղարաբաղի և Ղափանի հայության կղզիացած դիմադրությունը դատապարտված է արագընթաց կազմալուծման։

1725 թ. Ղարաբաղում արված փորձերն ավարտվեցին մարտի սկզբին Վարանդա մտած 4700 հոգուց բաղկացած օսմանյան հեծյալ զորաբանակի գրեթե լիակատար ոչնչացմամբ (այդ զորքի հրամանատար երեք փաշաներից երկուսն սպանվեցին, իսկ մեկը՝ գերեվարվեց) և թուրքերի նահանջով վերջացած ևս մի քանի բախումներով[12]։

.թյուն), Vol 2, pp. 177, 179—188; Mary L. Shay. The Ottoman Empire from 1720 to 1734. As revealed in despatches of the Venetian Baily. Urbana, 1944, pp. 121—123; Laurence Lockhart. The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia. Cambridge, 1958 pp. 254—256 272; М. С. Иванов. Очерк истории Ирана. М., 1952, с. 90—91; Новая история Ирана. Хрестоматия. Составители Н. К. Белова и др. М., 1988, с. 24—26.

[10] Jonas Hanway. Op. cit., p. 237. Ըստ Աբրահամ Երևանցու, Թավրիզի երկամսյա կռիվն այնքան զոհեր էր խլել, որ օսմանյան 158 հազարանոց բանակից մնացել էր ընդամենը 42 հազար զինվոր (Աբրահամ Երևանցի. Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թուի. Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ և ծանօթութիւններ պատրաստեց Սահակ Ջեմճեմեան. Վենետիկ—Մ. Ղազար, 1977, էջ 36, 112)։ 1725 թ. սեպտեմբերի 20-ին մխիթարյան միաբան Պետրոս վարդապետը Կ. Պոլսից գրում էր Մխիթար աբբահորը. «...վասն յաղթութեան Թէրվիզու՝ հրամանաւ թագաւորին հինգ օր եւ հինգ դիշեր չէհիր (քաղաքում—Ա. Ա.) տօնանմասի արարին։ Թէպէտ վասն պատճառի այսմ յաղթութեան ասեն թէ այնքան բազմութիւն ատանկաց անկեալ են ի պատերազմի. մինչ զի ոչ գոյ թիւ, ասեն» (Պատմութիւն Ղափանցւոց, էջ 99, փաստ. 21)։ (Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են —Ա. Ա.)։

[11] J. Hanway. Op. cit., pp. 237—239. հմմտ. J. T. Krusinski. Op. cit. pp. 180—181; L. Lockhart. Op. cit., pp. 267, 272.

[12] Տե՛ս АРО, II, док. 304, 309, 310, 312—325. հմմտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 4, էջ 75—76, ծան. 50։ Տե՛ս նաև Պատմութիւն Ղափանցւոց, էջ 100 (վավ. 24), 103 (վավ. 30)։ 1725 թ. հոկտեմբերի 13-ին Ղարաբաղից ռուսական Սուրբ Խաչ ամրոց ժամանած Քյոխվա-Չելերին (տե՛ս АРО, II, док. 322, с. 262) հայտնում էր. «При нем воинских действ только было, что пашу взяли и турок побили; но только во время бытности в Шемахе, сюда ныне едучи, слышал, что турков еще побили в провинции Карабахе, а сколько, не слышно, но будто с теми ведомостьми к Дауд беку приехал нарочной человек» (АРО, II, док. 325, с. 265): Քյոխվա-Չելերին, Անտոն երեցի հետ միասին, Ռուսաստանից Ղարաբաղ էր հասել 1725 թ. մայիսի 16-ին (նրանց ժամանման թվականը երկու վավերագրերում նշված է ՌԷՃԻԴ (=1724), տե՛ս АРО, II, док. 315, 318, որը սխալ է. պետք է լինի՝ ՌԷՃԻԵ=1725), իսկ նույն թ. հուլիսի 25-ին գրված նամակներից պարզվում է, որ այդ պահին արդեն, Քյոխվա-Չելերին կրկին ուղարկված էր Ռուսաստան (տե՛ս АРО, II, док. 315, 317, с. 250, 253)։ Հետևաբար, Ղարաբաղում նոր մարտերը, եթե դրանց մասին նրան հասած տեղեկությունը հավաստի էր, եղել են 1725 թ. օգոստոս—սեպ-

«Ղափանցվոց պատմությունը» հատուկ չի անդրադառնում 1725 թ. իրադարձություններին (եթե չհաշվենք այն, որ քոչվորների վրա Դավիթ-բեկի զորքերի կատարած երեք հարձակումը կարող էին եղած լինել եթե ոչ 1724 թ. երկրորդ կեսին, ապա 1725 թ., տե՛ս ՊՏԱ, էջ 135. հմմտ. Համապատում, էջ 164—165), այլ միանգամից պատմում է 1726 թ. օսմանյան հարձակման մասին (Համապատում, էջ 167. ՊՏԱ, էջ 136)։ Այստեղից պետք է եզրակացնել, որ 1725 թ. թուրքերը Ղափանի դեմ ուղղված խոշոր հարձակում չեն ձեռնարկել։ Այդուհանդերձ, 1725 թ., իրոք, օսմանցիների և Դավիթ-բեկի ուժերի միջև որոշ ընդհարումներ եղել են։ Այսպես, 1725 թ. մայիսի 11-ին Իվան Կարապետը հայտնել է կոմս Պ. Տոլստոյին, որ թուրքերը հարձակվել են Ղափանի վրա, սակայն Դավիթ-բեկը նրանց պարտության է մատնել և ետ շպրտել. «...а имя его Давуд бек, он же живет в Капанской земле; тамошних армян собрал к себе, турок пришел баталии давал, от них много побил, ныне сказывают и там турок нет» (АРО, II, док. 312, с. 241, 243)։ Հնարավոր է, որ 1726 թ. մարտի 24-ի վերոհիշյալ ուղերձում հիշատակվող՝ Ջերմուկի (հետևաբար՝ և ամբողջ Վայոց ձորի) դրավումը և ապա այդ ուղղությունից Ղափանի իշխանապետության վրա կատարված հարձակումը (տե՛ս АРО, II, док. 335, с. 273—274) վերաբերում են հենց 1725 թ. սկզբին օսմանցիների հախուռն և անպատրաստ այն գործողություններին, որոնք կատարյալ ձախողման ենթարկվեցին թե՛ Ղարաբաղում և թե՛ Ղափանում։ Ինչպես երևում է 1725 թ. վերջին Դարբանդ վերադարձած երկու հայ լրտեսների ռուսներին տված տեղեկություններից, 1725 թ. Նախիջևանում նստած թուրքական զորահրամանատարությունը, հավանաբար արդեն ճաշակած լինելով ղափանցիների հետ զինված առճակատման դառը պտուղները, փորձել է բանակցել Դավիթ-բեկի հետ. «Из Нахчивана турецкой паша посылал к армянам Капанским, к Даутбег баше (sic), чтоб он со своими армянами поклонился турецкому салтану и был бы у турок в подданстве. Но он Даутбег баша отказал ему турецкому паше и сказал, что я де вас не слушаю, в подданстве у вас быть не хочу и буду де против вас стоять доколе жив буду, а когда умру и что после меня останетца, тогда де как хотят, так и делают»[13]։

* * *

Բ. Այժմ անցնենք «Պատմության» ժամանակագրական կառուցվածքի քննությանը և այդ տեսանկյունից դիտենք մեր առաջադրած հարցերը։

Օսմանյան բանակի Ղափան ներխուժելու ժամանակը պարզելու համար «Պատմության» Համապատում բնագիրը տալիս է երեք տեղեկություն.

տեմբերին։ Մաղանդարանում՝ շահ Թահմասպի մոտ գտնված վրացի Սարիդան-բեկի 1726 թ. ապրիլին տված մի հաղորդումից կարելի է եզրակացնել, որ 1725 թ., մարտի հայտնի բախումից (որը թուրքերի հետ ղարաբաղցիների առաջին բացահայտ զինված առճակատումն էր) մինչև 1726 թ. ապրիլ ամիսը Ղարաբաղի մատույցներում եղել էր ևս երկու ընդհարում. «...сигнатцы турка трижды победили, и рубленные головы турецкие... (այստեղ երկու բառ անընթեռնելի է մնացել—Ա. Ա.) к шаху привез» (Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան. Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դարի 20-ական թթ. (Նոր վավերագրեր).—«Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, փաստ. 19, էջ 265)։ Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ, ճանապարհների անապահովության պայմաններում, 1725—1726 թթ. Ղարաբաղից Մազանդարան ընկած տարածությունը հաղթահարելու համար պահանջվելու էր առնվազն երկու-երեք ամիս (սովորական՝ խաղաղ պայմաններում Ղարաբաղից մինչև Գիլան 20 օրվա ճանապարհ էր—տե՛ս Г. Г. Пайчадзе. Русско-грузинские отношения в 1725—1735 гг. Тбилиси, 1965, с. 92), ապա պիտի կարծել, որ վերջին երկու բախումը եղել է դարձյալ 1725 թ.։

13 Տե՛ս АВПР, ф. Сношения России с Персией, оп. 1, 1725, д. 5, л. 335б. Հմմտ. Վ. Մ. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 173. Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի..., էջ 175։

1. «Ապա յամի Տեառն 1726ին, եւ ի թուին Հայոց հազար հարիւր եօթանասուն եւ հինգերորդին, անթիւ անհամար զօրօք մխեցան յաշխարհն Սիւնեաց, եւ հասին պատեցին ի չորից կողմանց զերկիրն Դաւթի, զեօթնաբերդն գաւառն Ղափանու» (էջ 167)։

2. «Արդ՝ յամսեանն իններորդի յետ գալստեան Օսմանցւոց ի Ղափան, որ այ՛ս հի՛նգերորդ ամ էր գալստեանն Դաւթի, եկին հասին ի Ղափան ի Սուլտան Ահմէտէն՝ Պէքիր փաշայն, եւ Արապ-Ալի[14] փաշայն՝ բազում զօրօք, ընդ ինքեանս առեալք նաեւ զՓաթալի խանն Պարկուշատու» (էջ 167)։

3. Այնուհետեւ, օսմանցի զորահրամանատարները, լայնածավալ նախապատրաստական եւ քայքայիչ աշխատանքներից հետո իրենց մոտ կենտրոնացնելով մեծաքանակ ուժեր[15], որոշ ժամանակ անց («եւ ժամանակ ինչ կացեալ անդ»—ՊՏԱ, էջ 136) «հանդէս արարեալ ամենայն զօրացն, կարգեցան պատրաստեցան դիմեցին գալ ի վերայ Դաւիթ Պէկին, եւ եկին բանակեցան յայնկոյս գետոյն Հալի ձորոյ, ի յերեքտասաներորդում աւուր քառասնորդաց պահոցն» (էջ 168. ՊՏԱ, էջ 136)։

Վերծանենք այս հաղորդումները.—1. 1726 թ. ինչ-որ ժամանակահատվածում օսմանցիներն սկսել են Ղափանի շրջափակումը։ 2. Ինն ամիս անց, իրենց լրտցուցիչ զորամիավորումներով, թուրքական զորքին են միացել սուլթան Ահմեդ Գ-ի ուղարկած Բեքիր փաշան և ազգությամբ արաբ Ալի փաշան։ 3. Որոշ ժամանակ անց, վերջնական պատրաստություն տեսնելուց հետո, օսմանյան բանակը դիմել է ընդհանուր հարձակման և, որևէ լուրջ դիմադրության չհանդիպելով, քառասնորդաց պահքի 13-րդ օրը մոտեցել է Հալիձորի բերդին և պաշարել այն։ Արդ, ճշտենք այս դեպքերի ժամանակը։

Քառասնորդաց պահքը կամ Քառասնորդքը նույն Մեծ պահքն է, որն սկսվում է Զատիկից 48 օր առաջ[16]։ Ո՞ր թվականի Քառասնորդքին է վերաբերում Տեր-Ավետիքի հաղորդումը։ Զատիկը շարժական տոն է, լինում է մարտին կամ ապրիլին[17]։ Համապատասխան շարժականություն ունի նաև Քառասնորդքը։ Հետևաբար, օսմանյան հարձակումը Հալիձորի վրա ոչ մի կերպ հնարավոր չէ վերադրել 1726 թ.[18], քանզի թուրքերն այդ թվին, առնըվազն ինն ամիս և էլի ինչ-որ մի անորոշ ժամանակահատված (նկատի ունենք մինչև Հալիձորի վրա արշավելը՝ Բեքիր և արաբ Ալի փաշաների ծավալած նախապատրաստական գործունեությունը), զբաղված էին Ղափանի

---

[14] Այս անվան առաջին բաղադրիչը ՊՏԱ-ում նշված է փոքրատառով՝ «արապ Ալի» (էջ 136)։ Ամենայն հավանականությամբ, Ալի փաշան ազգությամբ արաբ է եղել, այդ ցեղանունն էլ (էթնոնիմը), ժամանակի բավականին տարածված սովորությամբ, միացվել է նրա անձնանվանը և գործածվել միասնորեն՝ Արար-Ալի։ 1720-ական թթ. վերաբերող այլ աղբյուրներում Արար-Ալի օսմանցի զորապետ չի հանդիպում, սակայն հիշվում են Ալի անվամբ 2 կամ 3 Թուրք փաշա։ Արանցից՝ «Պատմության» արար Ալիին ամենից շատ համապատասխանողը Զորումի սանջակի մութասարիֆ (Զորումի վալի) Ալի փաշան է, որը 1724 թ. մասնակցել էր Երևանի պաշարմանը և այլ մարտերին (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան. Երևան, 1961, էջ 139—141)։ Չի բացառվում, որ հետագայում սուլթանը այս նույն Ալի փաշային է նշանակել Շաբիի բեկլարբեկի (տե՛ս APO, II, док. 377, 378, 379, с. 320—322)։ Ալի փաշա անունով օսմանցի զորահրամանատար, 1724—1735 թթ. ամբողջ ընթացքում, հիշատակում է նաև Նադիր շահի պալատական պատմիչ Մուհամագ-Քազիմը (տե՛ս նրա Նամե-յի Ալամարա-յի Նադերի դիրքը (պարսկ.), Մ. 1960, հ. 1, էջ 58 բ, 306 ա, 307 բ—309 ա)։

[15] Ըստ «Պատմության», 60—70 հազար դինվոր (տե՛ս ՊՏԱ, էջ 136—137. Համապատում, էջ 167)։

[16] Տե՛ս Մ. Օրմանյան. Միսսկան բառարան. Անթիլիաս, 1957, էջ 42, 65։

[17] Նույն տեղում, էջ 45—46։

[18] Աշ. Հովհաննիսյանը նկատում էր, որ «Պատմությունը» վերագրում է այդ անցքերը «ոչ այն է 1726, ոչ այն է 1727 թ.» (տե՛ս APO, I, с. LXXXII)։

շրջափակումն իրագործելով և հայերի մեջ անմիաբանություն սերմանելով, բայց դեռևս չէին համարձակվել մտնել երկրամասի խորքերը։ Սրանով աներկբա է դառնում, որ թուրքերը Հալիձորի բերդը կարող էին պաշարել միայն հաջորդ տարի, այն է՝ 1727 թ. փետրվարի 26-ին (հին տոմարով)[19]։ Նույն 1727 թ., Հալիձորի ճակատամարտից և մի շարք այլ հաղթանակներից հետո, Դավիթ-բեկը շահ Թահմասպ II-ին ընծա է առաքում չորս «բեռ» թուրք սպանված զինվորների գլուխները (Համապատում, էջ 173. ըստ Տեր-Ավետիքի՝ երկու բեռ, ՊՏԱ, էջ 139)։

Այժմ անցնենք մյուս երկու հարցի պարզաբանմանը։ Նախ՝ ե՞րբ է սկսվել Ղափանի շրջափակումը։ Այս խնդրի լուծմանը մեծապես նպաստում է 1726 թ. մարտի 24-ին ռուսներին հղված հայտնի ուղերձը։ Համառոտ նկարագրելով նախորդ տարիների Ղափանի փոթորկալից անցուդարձը, նամակագիրները հայտնում են. «Եւ այժմս օսմանցիք բազմացեալ եկեալ են Դ(4) կողմանէ մեզ պատեալ (sic! հմմտ. «Պատմության» վկայության հետ՝ «...յամի Տեառն 1726ին ... ճասին պատեցին ի չորից կողմանց զերկիրն Դաւթի, զեօթնաբերդ գաւառն Ղափանու»)[20], դեղորանքն առել ընդ մեզ պատերազմում. զի ոչ եմք կարում աստր և անդրն շրջիլ, այլ մնացեալ եմք ի մէջ ղալին, որպէս հաւքն ի մէջ ղափաղի» (АРО, II, док. 335, с. 274)։ Թեև այստեղ խոսվում է, կարծես թե, մի ամրոցի (ղալա) շրջափակման մասին, իրականում խոսքը վերաբերում է ամբողջ Ղափանին. նույն վավերագրի ռուսերեն թարգմանությունում թարգմանիչը ճիշտ է ընկալել այս հաղորդման իմաստը. «...а понеже ныне оные ж турки еще собрався великим многолюдством со всех четырех сторон *наши крепкие места* обступили так, что наши людем ни в которую сторону за безсилием нашим против их турков противитися невозможно...» (АРО, II, док. 336, с. 276):

Այսպիսով, օսմանցիները Ղափանի շրջափակումն սկսել են 1726 թ. գարնանամուտին։ Ուշագրավ է, որ նախորդ տարի Ղարաբաղում անհաջողության մատնվելուց հետո, 1726 թ. սկզբից թուրքերը ձեռնամուխ եղան նաև Ղարաբաղի Սղնախների շրջափակմանը. 1726 թ. մարտի 25-ին Դանձասարի Եսայի կաթողիկոսը Դարբանդի պարետին գրել է. «Այժմս այն յարևմտից մեծ թշնամին (իմա՝ օսմանցիները—Ա. Ա.) եկն պատեաց զմեզ...» (АРО, II, док. 337, с. 277, ср. док. 338, с. 279): Այստեղ, ինչպես և Ղափանում, շրջափակման հետևանքով երևան եկան պառակտման միտումներ. «Շատ մարդ մեր միջէս յուսահատում ա, դնում նոցա մօտն, և մեր կողմս նուազում է» (Նույն տեղում, էջ 278), հմմտ.՝ «այժմ (շրջափակման սկսվելուց հետո—Ա. Ա.) ամենայն բնակիչք գաւառին առհասարակ խռովեցան սասանեցան, թողին լքին զԴաւիթ, եւ գնացին մտին ընդ լծովն Օսմանցւոց» (Համապատում, էջ 167. ՊՏԱ, էջ 136)։ Այս փաստերը վկայում են այն նշանավոր իրողության մասին, որ 1720-ական թթ. Ղարաբաղը և Ղափանը, որքան էլ հարաբերականորեն անջատ էին պայքար մղում օտար նվաճողների դեմ, այդուհանդերձ, թե՛ իրենց աշխարհագրական դիրքով և թե՛ իբրև հայ ազատագրական շարժման անպարտ մնացած վերջին պատվարներ, թիկունքթիկունքի տված մի բնական ամբողջականություն էին և հենց այդպես էլ դիտվում էին օսմանցի ռազմակալների կողմից։

Եվ վերջին հարցը. ե՞րբ են արաբ Ալի փաշան և Բեքիր փաշան իրենց լրամիավորումներով միացել Ղափանը շրջափակող զորքերին։ Ըստ Համապատումի՝ «յամսեանն իններորդի յետ գալստեան Օսմանցւոց ի Ղափան, որ այն ճինգերորդ ամ էր գալստեանն Դաւթի». այսինքն՝ շրջափակման սկզբից ինն ամիս անց, 1726 թ. նոյեմբերին։ Համապատասխանում է նաև թվականը. 1726 թ. Դավիթ-բեկի Ղափան ժամանելու հինգերորդ տարին էր։ Այս-

---

19 1727 թ. Զատիկը եղել է ապրիլի 2-ին (հին տոմարով). 1727 թ. ապրիլի 2-ից—48 օր+13 օր (քառասնորդքի 13-րդ օրը)=փետրվարի 26։

20 Համապատում, էջ 167. հմմտ. Ա. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 94։

տեղ, սակայն, դեմ ենք առնում տրամաբանական արգելքի, քանի որ Համապատումի մի այլ տեղում կա մեր քննության եզրահանգումներին հակասող մի նախադասություն. «յամի Տեառն 1727ին, որ այն հինգերորդ ամ էր գալստեանն Դաւթի ի Ղափան» (էջ 173)։ Հակասությունը պարզելու համար անհրաժեշտ է վերականգնել Ղ. Սեբաստացու կողմից Համապատումի ժամանակագրության ստեղծման սկզբունքների ընդհանուր ուրվանկարը։ Այս անդամ ևս մեզ օգնում են վերը ներկայացված ժամանակագրական տվյալները։

Նախ, «Պատմության» նախնական գրառումների հայտնաբերումից հետո պարզվեց, որ ՊՏԱ-ում թանաքով գրված է եղել թուրքերի կողմից Ղափանի շրջափակման տարեթվի (1726 թ.) միայն առաջին երեք թվանիշը, այսպես՝ 172 և ՌՃՀ. Ղ. Սեբաստացին, կամ գուցե հետագայում մեկ ուրիշը, մատիտով ավելացրել է 6-ը և 6-ն, դարձնելով 1726 և ՌՃՀԲ (էջ 136)։ Աշ. Աբրահամյանն այսպես է մեկնաբանում այդ փաստը. «Ուրեմն, «Ընտիր պատմութեան» նախագաղափար օրինակը (իմա՝ նախնական պատումները—Ա. Ա.) գրելիս հաստատապես չեն իմացել թուրքական զորքերի Սյունիքի վրա հարձակվելու ճիշտ թվականը, ուստի այն գրել են մատիտով, որպեսզի հետագայում ճշտեն։ Իսկ «Ընտիր պատմութեան» խմբագրված օրինակում (իմա՝ Համապատումում—Ա. Ա.)... մատիտով պայմանական դրված թվականը թանաքի է վերածվել և քաղաքացիություն տրվել սխալ թվականին»[21]։ Այս մեկնությունը, սակայն, կամայական է և հակատրամաբանական։ Աշ. Աբրահամյանը առանց որևէ քննության պարզապես ժխտում է իր իսկ առաջ քաշած ենթադրությունը, որը շատ ավելի բնական է, այն է՝ 1726 թ. արձանագրությունը մտել է Համապատումի մեջ միայն Ղ. Սեբաստացու արած համապատասխան ճշտումից հետո։ Այս տեսակետի իրավացիությունն ավելի համոզիչ է դառնում, երբ նկատում ենք ՊՏԱ-ում նույն սկզբունքի կիրառումը նաև Դավիթ-բեկի մահվան ժամանակը որոշելու համար. «Եւ ի ժամանակի յայսմիկ մեռաւ Դաւիթ Պէկն խաղաղութեամբ ի տան իւրում, յամի Տեառն 17(28) և ի թուին Հայոց ՌՃ(ՀԷ) ի յամսեանն...» (էջ 142. 28-ը և ՀԷ-ն ավելացված են մատիտով)։ Այսպիսով, Ղ. Սեբաստացին դանկացել է ճշտել Դավիթ-բեկի մահվան ոչ միայն տարեթիվը, այլև ամիսը. վերջինիս պարզումն այդպես էլ չի հաջողվել. այս իսկ պատճառով ՊՏԱ-ում մնացել է անպատասխան, իսկ Համապատումում՝ Դավիթ-բեկի մահվան ամսվա խնդիրն այլևս չի դրվել (տե՛ս էջ 177)։ Այս իրողությունը լուսավորիչ փաստում է, որ Սեբաստացին այս հարցում ձգտել է առավել ստուգության, և որ այդ դեպքին վերաբերող Համապատումի ունեցած 1728 թ. կրկնակի և գուցե բազմակի ստուգման արդյունք է[22]։

Ժամանակագրական երկրորդ տեղեկությունը («յամսեանն ինն երորդի յետ գալստեան Օսմանցւոյ ի Ղափան, որ այն հինգերորդ ամ էր գալստեան Դաւթի») ՊՏԱ-ում առհասարակ չկա. այստեղ նշված է մի անորոշ ժամկետ՝ «Եւ ժամանակ ինչ կացեալ...» (էջ 136)։ Համապատումն ունի նախնական պատումներում բացակայող ևս մի քանի ժամանակագրական տվյալ. Դավիթ-բեկի Ղափան գալու («յամի Տեառն 1722 եւ ի թուին Հայոց Ռ. Ճ. Ն. Ա.»), Բարդուշատի Ֆաթհ-Ալի սուլթանի Զավնդուրի վրա կատարած առաջին հարձակման («Եւ յամին երկրորդի, յետ գալստեանն Դաւթի ի Ղափան»), Որոտնա բերդի գրավման («Եւ ի յամին երրորդի, յետ գալստեան յուրոյ ի Ղափան»), Թորոսի զորաբանակի պարտության («Յամի երրորդի՝ յետ գալստեանն Դաւթի ի Ղափան») թվականները[23]։ Այս ամենը հուշում է, որ Ղ. Սեբաստացին իր չպահպանված (գուցե, դեռևս անհայտ) սևագրու-

21 Աշ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի...., էջ 175։

22 Աշ. Աբրահամյանը վերոբերյալ նույն կամայական և հարևանցի դիտումով ժխտում է նաև Դավիթ-բեկի մահվանը վերաբերող «Պատմության» ժամանակագրական տեղեկությունը (տե՛ս նույն տեղում, էջ 177)։

23 Տե՛ս Համապատում, էջ 149, 151, 153, 157։

թյունների մեջ հատուկ նշել է «Պատմության» ժամանակագրությանը վերաբերող տվյալները և դրանք օգտագործել Համապատումը շարադրելիս։

Համապատումն ունի ժամանակագրության արձանագրման երկու եղանակ. *մի դեպքում նշվում է բուն թվականը, քրիստոնեական կամ հայկական տոմարով (էջ 147, 148, 149, 166, 167, 173, 177, 179), մյուս դեպքում՝ հիշատակվում է Դավիթ-բեկի Սյունիք գալու հերթական տարին (էջ 151, 153, 157, 167), օրինակ՝ «յամի երրորդի յետ գալստեանն Դաւթի ի Ղափան»։*

Առաջին եղանակը կիրառվել է այն դեպքում, երբ տարեթվի ճշմարտությունը որևէ կասկած չի հարուցել: *Այդ մասին է խոսում այն փաստը, որ, ժամանակագրության ստուգությանը հատուկ կարևորություն տալով, նախնական պատումների գրառումներում Ղ. Սեբաստացին չի շտապել արձանագրելու Ղափանի ազատամարտի մի շարք հանգուցային անցքերի համապատասխան թվականները. ՊՍՇ-ում և ՊՏԱ-ում առաջին եղանակով նշված է ընդամենը երեք տարեթիվ. 1721 թ., 1722 թ. և 1724 թ. (էջ 119, 120, 135)։ Ուշագրավ է, որ այս երեքն էլ վերաբերում են այնպիսի իրադարձությունների (աֆղանների ներխուժումը Իրան[24], լեզգիների ասպատակություններն Այսրկովկասում և Երևանի գրավումը օսմանյան բանակի կողմից), որոնք ժամանակին միջազգային մեծ հնչեղություն ունեին և պետք է հայտնի լինեին Վենետիկում հաստատված հայ միաբաններին թե՛ եվրոպական բազմաթիվ աղբյուրներից և թե՛ Արևելքում գտնվող մխիթարյանների ուղարկած տեղեկություններից (Ս. Արամյանը հրատարակել է վերջիններիս հատվածները— տե՛ս Պատմութիւն Ղափանցւոց, էջ 94—96)։ Կարծում ենք, որ բացի վերոհիշյալ երեքից,* Համապատումում քրիստոնեական կամ հայկական տոմարով նշված մյուս բոլոր թվականները նույնպես վավերականորեն հաստատվել են այս կամ այն աղբյուրով, *այլապես պարզապես անհասկանալի կլիներ նույն Համապատումում ժամանակագրական արձանագրման իրարից տարբեր երկու եղանակի գործածման իմաստն ու նպատակահարմարությունը։*

Երկրորդ եղանակը կիրառվել է, մեր համոզմամբ, այն դեպքում, երբ ժամանակագրական տեղեկությունը վերաբերել է տեղական ճշմարտություն ունեցող իրադարձություններին և, Ս. Շահումյանի, Տեր-Ավետիքի կամ այլ լրատուի անձնական եզակի վկայությունից բացի, ուրիշ ոչնչով չի հաստատվել *(այս եղանակով են նշված Բարգուշատից Չավնդուրի վրա կատարված առաջին հարձակումը, Որոտնա բերդի գրավումը, Թորոսի բանակի պարտությունը և Ալի ու Բեքիր փաշաների ժամանումը Ղափան. տե՛ս Համապատում, էջ 151, 153, 157, 167)։ Անտարակույս, Ղ. Սեբաստացու վերոհիշյալ լրատուները Ղափանի որոշ անցքերի ժամանակագրությունը վերհիշել են երկրորդ եղանակի սկզբունքով՝ հաշվելով Դավիթ-բեկի Ղափան գալու թվականից ի վեր։ Եթե Ալի և Բեքիր փաշաների Ղափան գալու թվականի*

---

24 *«Պատմության տեղեկությունն առ այն, որ դեռևս 1721 թ. աֆղանները գրավել են Սպահանը և սպանել շահ Սուլթան-Հուսեյնին (ՊՍՇ, էջ 119. Համապատում, էջ 147), ստույգ չէ։ Սպահանը գրավվել է 1722 թ. հոկտեմբերի 12-ին (հին տոմարով), նույն օրն էլ շահ Սուլթան-Հուսեյնը գահից հրաժարվել է հօգուտ աֆղանների առաջնորդ Միր-Մահմուդի (տե՛ս «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի».—«Կռունկ Հայոց աշխարհին», 1863, թ. Բ, էջ 103—104.* L. Lockhart. Op. cit., p. *168—173)։ Իրականում, գահազուրկ Սուլթան Հուսեյնն իր աֆղան տերերի ողորմածության տակ ապրեց մինչև 1726 թ. աշուն՝ երբ նրան գլխատել տվեց Իրանի երկրորդ աֆղան շահ Աշրաֆը (1725—1729). տե՛ս* L. Lockhart. Op. cit., p. *289։ Աղբյուրագիտական տեսանկյունից, թերևս, կարող է խիստ ուշագրավ փաստ լինել այն, որ Աբրահամ Երևանցին նույնպես 1721-ով է թվագրում Սպահանի գրավումը և շահ Սուլթան-Հուսեյնի սպանությունը (տե՛ս Աբրահամ Երևանցի, էջ 21, 91)։ Այս առումով հարցահույզ է նաև այն, որ և՛ «Պատմության» մեջ, և՛ Աբրահամ Երևանցու ինքնագրում շահ Սուլթան-Հուսեյնն անվանված է շահ Հուսեյն (ՊՍՇ, էջ 119. Համապատում, էջ 147. Աբրահամ Երևանցի. էջ 21), մինչդեռ Երևանցու երկի՝ Մաթևոս Գարագաշյանի խմբագրած օրինակում նա արդեն կոչված է իր լրիվ անվամբ (տե՛ս Աբրահամ Երևանցի, էջ 91)։*

հարցը մի կողմ դնենք, երկրորդ եղանակով թվագրված մյուս երեք դեպքերի վերաբերյալ Համապատումի հաղորդումները, ինչպես ցույց ենք տվել, ճշգրիտ համապատասխանում են իրականությանը. ըստ որում, հաշվելու սկզբունքը նույնն է. 1722 թ. համարվում է Դավիթ-բեկի Ղափան գալու առաջին տարին, 1723-ը՝ երկրորդը, 1724-ը՝ երրորդ[25]։ Այս սկզբունքով 1726 թ. պիտի համարվեր «հինգերորդ ամ գալստեանն Դավթի», և իրոք՝ «Պատմության» և Մխիթար-բեկի խնդրագրի տվյալների վերն արված համեմատությունն ապացուցում է, որ Ալի և Բեքիր փաշաները Ղափան են եկել 1726 թ. նոյեմբերին։ Հետևապես, «Պատմության» այն հաղորդումը, ըստ որի «յամի Տեառն 1727ին, որ այն հինգերորդ ամ էր գալստեանն Դավթի ի Ղափան»՝ արդյունք է ընդամենը թյուրիմացության, որի առաջացման խնդիրն էլ արժանի է քննության։

Արդ, հոգևորական Ղուկաս Սեբաստացին պետք է հեշտությամբ կռահեր, որ Հալիձորի ճակատամարտը եղել է 1727 թ., քանի որ գիտեր երկու փաստ. մեկ՝ որ 1726 թ. առնվազն ինն ամիս թուրքերը Հալիձորի ուղղությամբ հարձակման չեն դիմել, և երկրորդ՝ որ Հալիձորի ճակատամարտն ընթացել է քառասնորդաց պահքի (այն է՝ փետրվար-մարտ ամիսների) օրերին, հետևաբար, այն չէր կարող տեղի ունենալ 1726 թ.։ Բայց, ամենայն հավանականությամբ, հենց այս ճիշտ կռահումից հետո է, որ Ղ. Սեբաստացին թույլ է տվել հետևյալ վրիպումը. Ալի և Բեքիր փաշաների՝ մինչև Հալիձորի վրա գրոհելը Ղափանում կամ նրա սահմաններին գտնվելու ժամանակի մասին որևէ ստույգ տեղեկություն չունենալով, նա սխալմամբ կարծել է, թե նրանց Ղափան գալու և Հալիձորի վրա գրոհելու պահի միջև էականորեն զգալի ժամանակահատված չէր կարող լինել, այսինքն՝ որ Ղափան գալուց անմիջապես հետո նրանք ձեռնարկել են Հալիձորի պաշարումը։ Սակայն, ինչպես վերը տեսանք, այդ փաշաները մոտավորապես 3—4 ամիս Ղափանը շրջափակող զորքերի մեջ էին։ Այսպիսով, Ղ. Սեբաստացին երկու իրագործությունների՝ փաշաների Ղափան գալը և Հալիձորի ճակատամարտը մտովի թվարկել է 1727 թ.՝ առաջին դեպքում լինելով սխալ, երկրորդում՝ ճիշտ։ Բայց ուշադրությունը է, որ Համապատումն այդպես էլ այդ երկու անցքը ուղղակիորեն (այն է՝ առաջին եղանակով) 1727 թ. չի թվագրում։ Փոխարենը, 1727 թ. առաջին եղանակով արձանագրված է Դավթի-բեկի՝ սպանված թուրք վինվորների դլուխների շորս բեռը շահ Թահմասպ II-ին առաքելու և Թահմասպի՝ Դավթի-բեկին հղած պատասխան հրովարտակի կապակցությամբ (տե՛ս Համապատում, էջ 173)։ Հետաքրքիր է, որ Տեր-Ավետիքի պատումում Թահմասպի հրովարտակի բովանդակությունը շատ ավելի համառոտ է շարադրված, քան Համապատումում.

ՊՏԱ.—«Որքան խանք գոն ի կողմանսդ յայդոսիկ՝ ղխաւորն լիցի Դաւիթ Պէկն, եւ ոնացեալ ի բաց հանցէ զՕսմանցին յերկրէն իւրմէ» (էջ 139)։

Համապատում.—«Շահթամաղ արքայ Պարսից՝ առ քաջդ Դաւիթ Պէկ, եւ առ քաջ զօրավարսդ Հայոց՝ որք ընդ քեզ են, ողջոյն։ Ի բաղմաց բաղում անդամ աղդ եղեւ մեզ զքաջութեանց քոց. բայց արդ իբր ականատես իսկ եղեալ մեր զձերոց մեծամեծ քաջութեանց՝ որ ընդդէմ թըշնամեացն մերոց, ահա՛ արդ կացուցի զքեզ իշխան եւ գլուխ ամենայն իշխանաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ. եւ երկիրդ Ղափան զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի. բայց դու ելցես եւ ժողովեսցես առ քեզ զամենայն զօրս

25 Տե՛ս Համապատում, էջ 151, 153, 157. հմմտ. մեր ուսումնասիրության արդյունքների հետ՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, 3, 4, 1991, № 2։

և դխանս ի կողմանցդ յայդոցիկ, և ի բաց հանցես զՕսմանցին ի սահմանաց քոց» (էջ 173—174)։

Ուշ միջնադարի պարսկական վավերագրերի հմուտ մասնագետ Հ. Դ. Փափազյանը նկատում է, որ շահ Թահմասպի՝ Դավիթ-բեկին հասցեագրած «հրովարտակի շարադրանքը... իր ձևով և ոճով բավական նման է այդ շրջանից մեզ հասած նմանատիպ հրովարտակներին»[26]։ Սթե այս դիտողությունը բաղդատենք վերն արտահայտված մեր այն կարծիքի հետ, ըստ որի Ղ. Սեբաստացին տարեթվերը քրիստոնեական կամ հայկական տոմարով է նշել միայն այն դեպքերում, երբ անվերապահորեն հավատացած է եղել դրանց ստուգությանը՝ ապա կարելի է ենթադրել, որ Համապատումում նա ոչ թե փորձ է արել «Տեր-Ավետիքի բանավոր նկարագրության հիման վրա տալ հրովարտակի շարադրանքը»[27], այլ ձեռքի տակ ունեցել է կամ այդ հրովարտակը, կամ նրա պատճենը, կամ էլ՝ նրա հայերեն թարգմանությունը, որը ե թվագրված է եղել։ Այդ վավերագիրը կարող էր Վենետիկ հասնել նույն Տեր-Ավետիքի կամ հաճախ այստեղ այցելող այլ ղափանցիների միջոցով։ Ահա այս ճանապարհով է, կարծում ենք, որ 1727 թ. արձանագրվել է Համապատումի հենց այդ՝ Թահմասպի հրովարտակը ներկայացնող հատվածում, և ոչ այլուր։ Այդտեղ էլ, Ղ. Սեբաստացին, վերընթերցելով երկու թուրք փաշաների Ղափան հասնելու մասին ժամանակագրական տրվյալը, ուր ասված է, որ նրանք «եկին հասին ի Ղափան», երբ «այն հինգերորդ ամ էր գալստեանն Դաւթի», և, կարծելով, թե այդ դեպքը, Հալիձորի ճակատամարտի հետ միասին, տեղի է ունեցել 1727 թ., փորձել է խմբագրական ծանոթագրում անել, միահյուսելով Համապատումի ժամանակագրական կառուցման երկու եղանակը, և ստանալով հետևյալ սխալ բանաձևը. «յամի Տեառն 1727ին, որ այն հինգերորդ ամ էր գալստեանն Դաւթի ի Ղափան» (էջ 173)[28]։ Ղ. Սեբաստացու այս եզակի փորձի ձախողումը և դրա բացահայտումը մեկ անգամ ևս հաստատում են, որ Համապատումի ժամանակագրությունը հիմնականում կառուցված է Սյունյաց ազատամարտի մասնակիցների անմիջական վկայությունների հիման վրա և շնչին չափով է միայն խմբագրական վերլուծության և միջամտության արդյունք, ըստ այդմ էլ, առավել բարձր պետք է գնահատել այդ ժամանակագրության հավաստիությունը։

* * *

Գ. «Ղափանցվոց պատմության» ժամանակագրության հավաստիության դեմ Պ. Հարությունյանն առաջադրել է մի լուրջ առարկություն ևս. «Ստեփանոս Շահումյանը գրում է[29], որ 1727 թ. շահ Թահմասպը, զարմանալով Դավիթ-բեկի և նրա զինվորների քաջության վրա, նրան ընծաներ է ուղարկում ու մի հրովարտակ, որով ճանաչում է Դավիթ-բեկի իշխանությունը ...։ Ստեփանոս Շահումյանի նշած թվականը (1727) պետք է համարել ոչ հավաստի։ 1725 թ. օգոստոսից Թավրիզը գրավված էր թուրքա-

26 Հ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն, նշվ. աշխ., էջ 99։

27 Նույն տեղում։

28 Ի դեպ, Համապատումի սույն բանաձևի պատճառով Ալի և Բեքիր փաշաների Ղափան գալու ժամանակի հարցում սխալվել է նաև Ա. Միրզոյանը, որը, սկզբունքորեն ճիշտ վարելով քննությունը, 1726 թ. մարտից հաշվելով 9 ամիս, ստացել է... 1727 թ. հունվարը (տե՛ս Ա. Մ ի ր զ ո յ ա ն, նշվ. աշխ., էջ 95)։

29 Պ. Հարությունյանը Ս. Շահումյանին համարում էր «Դավիթ Բէկի պատմութեան» հեղինակ. տե՛ս П. Т. А р у т ю н я н. Освободительное движение ... с. 252:

կան զորքերի կողմից[30], դրանով Թահմասպի և հայ զորահրամանատարների միջև կապը կտրվել էր»[31]։ Ըստ այսմ էլ, Դավիթ-բեկը շահի հրովարտակը պետք է ստացած լիներ մինչև Թավրիզի անկումը, Պ. Հարությունյանի կարծիքով՝ 1725 թ. դարնանը[32]։

Նույն նկատառումներով Աշ. Աբրահամյանը Դավիթ-բեկի և շահ Թահմասպի դաշինքը դնում է 1725 թ. ամռան ամիսներին։ Նկատի ունենալով Ադուլիսի մոտ՝ «Մարադի» դաշտում տեղի ունեցած ճակատամարտից երեք պարսիկ խանների փախուստը, նա մատնանշել է նաև, որ «Պատմության» մեջ 1727-ին վերադրվող անցքերի նկարագրությունում «ասվում է, որ պարսկական զորքերը նահանջել են Թավրիզ», այնինչ այդ ժամանակ Թավրիզը գտնվում էր թուրքերի ձեռքում[33]։

Վերոգրյալի առթիվ առայժմ նշենք երկու հանգամանք. 1. խնդրո առարկա դեպքերը պատմել է ոչ թե Ս. Շահումյանը, այլ Տեր-Ավետիքը, որը Ղափտնում էր գտնվում տակավին մինչև 1729 կամ 1730 թ. (տե՛ս ՊՏԱ, էջ 142—143. Համապատում, էջ 178—179). 2. Մարադի ճակատամարտի «Պատմության» նկարագրությունում, փակագծերի մեջ, հնարավոր է, որ նշված լինի պարսիկ խանների փախստի սոսկ ուղղությունը՝ «մինչդեռ փախստեայ երթային նոքա ի Թավրէզ» (ՊՏԱ, էջ 140—141. Համապատում, էջ 176), ե սխալ կլինի սրանից եզրակացնել, թե այդ պահին Թավրիզն անպայմանորեն պարսիկների ձեռքում պիտի լիներ։ Բացի այդ, ինչպես և «Պատմության» այլ տեղերում, նախադասության փակագծերի մեջ դրված լինելը Ղուկաս Սեբաստացու որոշակի խմբագրական միջամտության արդյունք պիտի լինի. այս դեպքում՝ ոչ այնքան հաջողված (հմմտ. ՊՍՇ, էջ 121. ՊՏԱ, էջ 141. Զորայրուցակ, էջ 143. Համապատում, էջ 156 (հմմտ. ՊՍՇ, էջ 124), 157)։ Այդուհանդերձ, լրացնելով «Պատմության» ժամանակագրության հավաստիության նկատմամբ առաջադրված առարկությունների վերաբերյալ շարքը, նկատենք, որ Համապատումը տալիս է և այսպիսի մի տեղեկություն. Հալիձորի ճակատամարտից անմիջապես հետո, «յաւուրս քառասնորդացն պահոյ առաքեալ նա (Դավիթ-բեկը—Ա. Ա.) զմխիթար սպարապետն և զտէր Աւետիսն՝ վաթսուն եւ վեց վառելովք առ Խանն Դուզալի եւ առ եղբայր նորա Լեքալի Խանն ... եւ եկին գտին զնոսա ի շէնն Քուրդուշեան՝ ի կողմանս Ուրդուարայ, առ Երասխաւ. զի յաւուրսն յայնոսիկ շահ Թամազն էր ի Թաւրէզ, եւ իշխան զօրուն՝ որ էր Դուզալի Խանն, բաղում զօրաք ի կողմանս Երասխայ՝ ընդդէմ Օսմանցւոցն» (Համապատում, էջ 171. հմմտ. ՊՏԱ, էջ 137—138)։ Հ. Դ. Փափազյանը ցույց է տվել, որ Ղուկաս Սեբաստացին, ՊՏԱ-ն վերաշարադրելիս, Համապատումի վերաբերյալ հատվածում թույլ է տվել մի շարք աղավաղումներ. այսպես, Դուզալի շրջանն ընկալվել է որպես այդ շրջանին տիրող Քյազում-խան Կարադաղլուի անձնանուն (Դուզ-Ալի), կիսաբարբառային ձևով Տեր-Ավետիքի արտահայտած «եւ եղբայր նորա խանն լե Քազում ջանայր հաւանեցուցանել» խոսքի թյուրընկալման պատճառով Համապատումում խանի եղբայրն անվանված է «Լեքազի»[34]։ Արդ, Համապատումի նշված հատվածի ընդհանուր անհաջող խմբագրության արդյունք է նաև 1727 թ. շահ Թահմասպի Թավրիզում լինելու մասին տեղեկությունը, բանի որ նախնական պատումում՝ ՊՏԱ-ում այն պարզապես չկա (տե՛ս էջ 137—138)։

Այժմ, ըստ էության. որքանո՞վ էր հնարավոր դաշինքը շահ Թահմասպ II-ի և Դավիթ-բեկի միջև 1727 թ.։

---

30 Թուրքերը Թավրիզը գրավել են 1725 թ. օգոստոսի 1-ին (նոր տոմարով). տե՛ս L. Lockhart. Op. cit., p. 265.

31 П. Т. Арутюнян. Освободительное движение..., с. 269.

32 Նույն տեղում, հմմտ. Վ. Մ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 178։

33 Աշ. Աբրահամյան. Այունիքի XVIII դարի ..., էջ 176։

34 Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 98։

1725 թ. շահ Թահմասպը հեռավոր Մազանդարանում էր[35] և այնտեղից Սեֆյանների գահին վերահաստատվելու անհաջող փորձեր էր անում։ Խիստ ուշագրավ է, որ 1725—1727 թթ. ամբողջ ընթացքում Ղարաբաղի Հայոց Սղնախները բանագնացների միջոցով շարունակում էին մշտական կապ պահպանել նրա հետ[36]։ Իսկ ահա թե ինչպիսին էին Սեֆյան վերադարձի ծրագրերը 1726—1727 թթ. ձմռան ամիսների նկատմամբ։ Թահմասպի արքունիքում գտնվող Վրաց իշխան Սարիգան-բեկը[37] 1726 թ. ապրիլին հայտնում էր Վախթանգ VI-ին. «...здесь (իմա՝ Մազանդարանում և Գիլանում—Ա. Ա.) великие правинции имеются... и в нынешнем лете сии правинции утвердим и турка не допустим, и которые адербежанцы и сальянцы оных всех здесь в Гиляне и в Мазандроне в горах зберем и нынешнюю зиму под Ганжу приступя осадим. И сигнатское войско и около тамошних мест обывателей совокупя х крузинской земле пойдем; сигнатцы турка трижды победили, и рублеиные головы турецкие... (այստեղ երկու բառ մնացել է անընթեռնելի—Ա. Ա.) к шаху привез[38]...»:

Այս չափազանց արժեքավոր հաղորդումից պարզ է դառնում, որ Արցախ-Սյունիքում թուրքերի դեմ մարտնչող հայկական զորքերը ոչ միայն տեղյակ էին պահված շահ Թահմասպի սույն հարձակողական ծրագրին, այլև այդ առումով տվել էին իրենց համաձայնությունը։ Թե որքան անիրապաշտ էր այդ ծրագիրը, ցույց տվեցին հետագա իրադարձությունները, բնական էր, սակայն, որ դժվարին պայմաններում հայտնված հայկական դիմադրական ուժերը պետք է որոշակի հույսեր կապեին շահի խոստացած օգնության հետ։

1727 թ. հունվարին սիփահսալար (գերագույն զորահրամանատար) Մուհամադ-Ռիզա խան Արդալլուին շահ Թահմասպ II-ի հղած հրովարտակից, ուր ասված է՝ թե Դավիթ-բեկը ծանր կացության է մատնվել և հարկ է նրան շտապ օգնություն ցույց տալ[39], երևում է, որ 1726 թ. Դավիթ-բեկը օժանդակության խնդրանքով դիմել էր Թահմասպին։ Դատելով ըստ եղած տվյալների, սա կարող էր լինել 1724 թ. ի վեր Թահմասպի հետ Դավիթ-բեկի առաջին շփումներից մեկը (եթե ոչ առաջինը)։ Թահմասպի հրովարտակում Դավիթ-բեկն անվանված է Վրաստանի և Քարթլիի վալի Հուսեյն-Կուլի խանի, իմա՝ Վախթանգ VI-ի[40] ստորակա։ Այս դրվագը գրեթե լիովին փաստում է, որ շահի այդ հրովարտակը (որով, ի միջի այլոց, մոռացության էր տրվում Դավիթ-բեկի նախորդ ապստամբական գործունեությունը) ձեռք էր բերվել 1726 թ. սեպտեմբերի 10-ին Ռուսաստանից Գիլան ժամանած Վախթանգ VI-ի[41] միջնորդությամբ, որը հենց այդ ժամանակամիջոցին, ռուսաց կայսրուհու հանձնարարությամբ, գործուն բանակցություններ էր վարում

---

35 J. Hanway. Op. cit., p. 246. J. T. Krusinski. Op. cit., Vol. 2, p. 176; L. Lockhart. Op. cit., p. 278—279. Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան, նշվ. աշխ., փաստ. 14, 17, էջ 261, 264։

36 Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան, նշվ. աշխ., փաստ. 13, 19, էջ 261, 265։ Армянское войско в XVIII веке, док. 112, 163, с. 289. 407. АРО, II, док. 304. 310, с. 221—222, 236. հմմտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 4, էջ 75—76, ծնթ. 50։ от 1639 г. по 1770 г. СПб., 1861, с. 183. ср. Г. Г. Пайчадзе. Указ. соч., с. 27, 77):

37 Սարիգան-բեկը Վախթանգ VI-ի նախկին սեղանապետն էր (տե՛ս Г. Г. Пайчадзе, Указ. соч., с. 80):

38 Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան, նշվ. աշխ., փաստ. 19, էջ 265։

39 Նույն տեղում, փաստ. 23, էջ 267. հմմտ. Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 96—97։

40 1716 թ. առերես մահմեդականություն ընդունելով, Վախթանգն այդ անունն էր ստացել (տե՛ս Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями от 1639 г. по 1770 г. СПб., 1861, с. 183, ср. Г. Г. Пайчадзе. Указ. соч., с. 27, 77):

41 Г. Г. Пайчадзе. Указ. соч., с. 101; АВПР, Ф. Сношения России с Грузией, 1726 г., д. № 1, лл. 226—227.

շահի արքունիքի հետ, իսկ 1726 թ. նոյեմբերի 8-ին Ռեշտի մոտ հանդիպել էր նույն Մուհամադ-Ռիզա խանին, որն այդ պահին դեռևս ղորչի-բաշի (հեծյալ արքունական գնդի հրամանատար) էր[42]։ Արդ, Մազանդարանում ապաստանած Պարսից շահից Դավիթ-բեկի ունեցած ակնկալիքները միանգամայն արդարացված էին. ըստ «Պատմության», Թահմասպին շարունակում էին իրենց գերակա համարել Ղափանին հարևան Ղարադաղի շրջանում օսմանցիներին չհպատակված պարսկական խաները, որոնց հետ էլ 1727 թ. դաշնակցեց Դավիթ-բեկը, սկզբում ուղիղ կապեր հաստատելով, իսկ հետո Թահմասպի կողմից նշանակվելով այդ տարածաշրջանի (Ղափան+Ղարադաղի, Բարգուշատի, Նախիջևանի հարակից շրջաններ) «իշխան և գլուխ ամենայն իշխտնաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ» (տե՛ս ՊՏԱ, էջ 137—141. հմմտ. Համապատում, էջ 171—176)[43]։

Հարկ է նկատել նաև, որ Վախթանգ VI-ի դեռևս 1725 թ. սպասվող այցը ռուսների դրաված մերձկասպյան շրջաններ՝ հայերին կրկին ռազմական օգնություն ստանալու հույս ներշնչելով, մեծ ոգևորություն էր առաջացրել Ղարաբաղում[44]։ Անտարակույս, տարբեր ճանապարհներով այդ լուրը պետք է հասած լիներ նաև Ղափան, քանի որ իր գալստյան մասին Վախթանգն ինքն էր ծանուցում Այսրկովկասի հակաօսմանյան բոլոր ուժերին. այսպես, 1726 թ. դեկտեմբերին Կ. Պոլսում Թուրքիայի արտգործնախարարի պարտականությունները կատարող պաշտոնյան՝ ռեյիս-էֆենդին ռուսական ռեզիդենտ Նեպլյուևին բողոքում էր, որ Վախթանգը, գալով Գիլան, սկսել է նամակներ հղել մուղանցիներին, հայերին և վրացիներին՝ նրանց Թուրքիայի դեմ հանդես գալու կոչ անելով[45]։

Հատկանշական է, որ թեև Վախթանգն ստացել էր Պարսկաստանում միայն ռուսական քաղաքականության ծիրի ներքո գործելու մանրամասն հրահանգներ[46], բայց և այնպես հաճախ էր փորձում դուրս գալ իրեն պարտադրված շրջանակներից և ինքնուրույն քաղաքական քայլեր անել[47]։ Այդ իսկ պատճառով ռուսական պաշտոնյաները, կայսերական հատուկ հրամանի համաձայն, խստորեն վերահսկում էին Վախթանգի և նրա մերձավորների բոլոր ձեռնարկումները ընդհուպ մինչև գրագրության բացումն ու ստուգումը[48]։ Մի այլ խոսուն փաստ. Վախթանգը գանգատվում էր, որ իր՝ Դերբենդում լինելու ընթացքում, Հայաստանից եկած ինչ-որ յուզբաշիների որոշ ժամանակ չէին թույլատրում այցելելու իրեն[49]։ Այս ամենը գալիս է հուշելու մեզ, որ ռուսական քաղաքականության թիկունքում Վախթանգը կարող էր շահ

---

42 Г. Г. Пайчадзе. Указ. соч., с. 104—120.

43 Անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ուոքերը չափազանցրել է այս հաղորդումը, կարծելով, թե Դավիթ-բեկը նշանակվել է ամբողջ Այսրկովկասի պարսկամետ հակաօսմանյան ուժերի գլխավոր հրամանատար (տե՛ս Christopher J. Walker. Armenia. The Survival of a Nation. Revised second edition. New York, 1990, p. 40)։

44 Այս մասին Իվան Կարապետը գրում էր. «Ջալապի Քէխվէն, որ եկել էր Դարպանտ, մին պստիկ գիր ղարկէց մեր սէղնաղ. գրէլ էր, թէ չէտրալ քնազ Վասիլ Վալայդամուրիչ Դողոռուքօվն ե Վայխտանք խան եկէլ ան ձեղ քօմակ․ Ուզբաշիք օր էն գիրն տեսեն, ուրախացանք, եկան էստեղ էնտեղ օսմալու կոտորեցին, օսմալուն չանգէզ զամէն ուրէնց դիղն ամ[ե-նայն] շինեցին» (այստեղ-այնտեղ օսմանցիներին կոտորեցին, օսմանցիների ձեռոտն ամենուր իր տեղը դրեցին, խմա՝ չարգեցին—Ա. Ա.),—տե՛ս АРО, II, док. 350, с. 290. ср. док. 330, 344, 347, 356, с. 270, 285, 288, 296. Г. Г. Пайчадзе. Указ. соч., с. 86—88. Հմմտ. Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից. Երևան, 1953, փաստ. 79, էջ 261։

45 Г. Г. Пайчадзе. Указ. соч., с. 114.

46 Նույն տեղում, էջ 96—99։

47 Նույն տեղում, էջ 90—95, 104—120։

48 Նույն տեղում, էջ 80, 111—112։

49 Նույն տեղում, էջ 110։

Թահմասպի և Դավիթ-բեկի միջև միջնորդի դեր խաղալ, մանավանդ, եթե նկատենք, որ այդ պահին նա արդեն շատ լավ էր պատկերացնում Այսրկովկասում ռուսների որդեդրած քաղաքականության ողջ կրավորականությունը և այն, որ նրանցից մոտակա ժամանակաշրջանում ռազմական օգնություն ստանալու՝ հայերի և վրացիների հույսերը հիմնազուրկ են[50]։ Այս իսկ տեսակետից բնորոշ է, որ Վախթանգը Այսրկովկաս և Դիլան գործուղվելուց առաջ ռուսական արքունիքից խնդրում էր իրեն ազատել Հայաստանին վերաբերող այն հանձնարարությունից, որով նախատեսվում էր, տարբեր հավաստիացումներ տալով, շարունակել հայերին պահել մի կողմից ռուսական կողմնորոշման մեջ («содержать... при нашей стороне») և, մյուս կողմից՝ թուրքերի դեմ գրգռված վիճակում[51]։ Այս առթիվ Վախթանգը երկյուղ էր հայտնում, որ թուրքական խոշոր հարձակման դեպքում հայերը կարող են ընկնել ծայրաստիճան վատ դրության մեջ[52]։ Միանգամայն հնարավոր է նաև, որ Վախթանգն այս կապակցությամբ իր բոլոր նկատառումներն ինչ-որ ճանապարհով հասցրած լիներ Այսրկովկասում հակաօսմանյան պայքարը ղեկավարող իր նախկին զինակից մերձավորներին, որպիսիք էին, մասնավորաբար, Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանը և Դավիթ-բեկը։ Այսպես՝ 1726 թ. հունիսի 15-ին Եսայի կաթողիկոսը, նկարագրելով Ղարաբաղի ծանր վիճակը և գրելով, թե «հիմա օր քան զօր թշնամին համ մօտանում է, համ ուժովանում, նաև մինչև հիմա սապր ին անում (սպասում էին—Ա. Ա.), հիմա այլ սապր անել չկա. զերայ ձեր էս կողմ գալուն համբաւն լսել են (հետևաբար, այդ լուրն արդեն հանրածանոթ էր ամբողջ տարածաշրջանում—Ա. Ա.) շատ թահդի հարաքաթի վերայ են (շուտափույտ գործողություններ են պատրաստում—Ա. Ա.)», գիմում էր Վախթանգին. «Ահա մեր խնդիրքն այն է, թէ որ եւտ ու առաչ, շատ և փոքր, մեզ մէկ օգնութիւն անելու էք, վասն Աստուծոյ, պիտի որ վախտին հասանէք Շամախի, որ ժամանակն այս է, թէ որ անցաւ՝ էլ մեր հովին հասնիլ չի։ Ապա թէ որ իսկի բնաւ մեզ օգնութիւն հասնելոյ չէք, էլվի մեզ մէկ սարեհ ջուղապ (պարզորոշ պատասխան—Ա. Ա.) գրէք, [որպեսզի] մեր փքիրն քաշեմք (խորհենք մեր վճռելիքը—Ա. Ա.), [քանի] որ բանն բանէն անցել է...» (АРО, II, док. 344, с. 285)։

Մեկ ամիս անց՝ 1726 թ. հուլիսին Եսայի կաթողիկոսը գնաց օսմանցիների հետ համագործակցության (տե՛ս АРО, II, док. 345, с. 285—286)։ Իսկ 1726 թ. նոյեմբերին նա, Ղարաբաղի մելիքների և գյուղապետերի հետ միասին («քուլ Ղարայպաղի մէլիքներովն և քադխուդովն»), սկսեց բացահայտ պայքար մղել այդ պահի համար բացարձակապես անիրապաշտ ռուսական կողմնորոշմանը հավատարիմ մնացած Ավան-յուզբաշու և նրա զինակիցների գործելակերպի դեմ, ինչպես վերջիններս էին գրում՝ «Հոգևոր Տէրն կանկնել է թէ Դ(4) տարի է, որ ուռուսն մեզ խափում է՝ «ես կուկամ զձեզ անօրինաց ձեռաց ազատեմք», էլ եկաւ ոչ, յիմայ օսմանցունց ղուլուզական եմք (հիմա օսմանցուն ենք ծառայում—Ա. Ա.)» (АРО. II, док. 346, с. 286—287)[53]։ Կարծում ենք, որ իր քսանամյա քաղաքական ամբողջ

---

50 Նույն տեղում, էջ 96—120։

51 Նույն տեղում, էջ 91—93։

52 Նույն տեղում, էջ 93։

53 Այնուամենայնիվ, ինչպես երևում է իշխան Վ. Դոլգորուկովին՝ գեներալ-լեյտենանտ Ռումյանցևի 1728 թ. դեկտեմբերի 16-ին գրած նամակից, Ավան-յուզբաշու և Եսայի կաթողիկոսի համագործակցությունը, օսմանցիներից գաղտնի, հավանաբար, շարունակվել է մինչև վերջինիս մահը, որի ժամանակը, շնորհիվ այս վավերագրի, առավել որոշակի է դառնում (1728 թ. ամառ). պատմելով Ավան և Թարխան յուզբաշիների Ղարաբաղից դուրս գալու մասին, Ռումյանցևը գրում էր՝ «...И можно, милостивый государь, видеть, что они (խմ՝ Ավան-յուզբաշին և նրա զինակիցները—Ա. Ա.) держалися все умом и наставлением патриарха Исайя который нынешним летом умер, *и хотя он при наше был, токмо тайными наставлениями их не оставлял.* А как он умре, то они все иные меры взяли...» (АВПР, Ф. Сношения России с Персией, опись 1, 1728 г., д. 6, лл. 105б—106а):

ուղեկցից Եսայի կաթողիկոսի այս կտրուկ շրջադարձը տեղի է ունեցել նաև ու հատկապես ռուսական դիվանագիտությանը և նրա նպատակադրումներին վերաբերող իր հարցումներին ի պատասխան՝ քաջատեղյակ Վախթանգից ստացած ճշգրիտ տեղեկությունների ուղղակի ազդեցությամբ։

Ինչևիցե, այսքանով, թերևս, կարելի է հերքված համարել 1725 թ. հետո, Թավրիզի գրավումով՝ շահ Թահմասպ II-ի և Ղափանի հայոց իշխանապետության միջև կապը կտրված լինելու մասին թեզը, և, դրան զուգընթաց, մեկ անգամ ևս հաստատել «Ղափանցվոց պատմության» ժամանակագրության արժանահավատությունը։

* * *

Եվ վերջինը։ Պ. Հարությունյանը, հաստատելու համար «Պատմության» ժամանակագրական տվյալների սխալականությունը, հիշատակում է մելիք Փարսադանի և Մխիթար սպարապետի գերեզմանաքարերի վրա եղած վիմագրերը։

Մելիք Փարսադանի տապանագիրը հրատարակվել է մի քանի անգամ[54]։ Վերջին՝ լուսանկարով ուղեկցվող հրատարակությունն ունի փաստագրական ճշտություն. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱԼԻԾՈՐԵՑԻ ՄԵԼԻՔ ՓԱՐՍԱԴԱՆԻՆ ՈՐ Է ՈՐԴԻ ՊԱԼ(Ա)ՍԱՆԻ»[55]։ Երվանդ Լալայանն իր առաջին հրատարակության մեջ (1905 թ.) սխալմամբ այս վիմագրին ավելացրել է տարեթիվ՝ «ԹՎԻՆ ՌՃՀԳ (1724)», որն էլ Պ. Հարությունյանին հիմք է տվել մերժելու «Պատմության» ժամանակագրական տվյալները[56], որոնց համաձայն, մելիք Փարսադանը զոհվել է 1727 թ. (տե՛ս Համապատում, էջ 173—176)։ Իր հաջորդ հրատարակությունում (1912 թ.), սակայն, Ե. Լալայանը, հանելով տարեթիվը, ուղղել էր վրիպակը։ Մյուս բոլոր հրատարակիչները (բացի Ս. Խանզադյանից, որը հետևել է Ե. Լալայանի առաջին հրատարակությանը) նույնպես առանց տարեթվի են վերատպել վիմագիրը։

Սրան հակառակ, երկրորդ դեպքում, որը շեշտում են Պ. Հարությունյանը և Աշ. Աբրահամյանը[57], Մխիթար սպարապետի տապանաքարի վրա նըշված մահվան թվականը՝ ՌՃՀԶ (1727), իրական է[58] և իսկապես հակասում է «Պատմության» հաղորդմանը, ըստ որի, Մխիթարը զոհվել է 1730 թ. (տե՛ս Համապատում, էջ 179. հմմտ. ՊՏԱ, էջ 142)։

Արդ, տապանաքարի այս ժամանակագրական թյուրիմացությունը կարող էր առաջանալ հետևյալ կերպ. Մխիթարի գերեզմանի հարևանությամբ՝ Խընձորեսկի Անապատ կոչվող եկեղեցու հյուսիսային կողմում, գտնվում է նաև 1748 թ. զոհված Զանգեզուրի մելիքներից մեկի՝ Բարխուդարի գերեզմանը։ Ս. Բարխուդարյանը գրում է, որ «մելիքի գերեզմանաքարը թեև ավելի մեծ է, բայց իր ձևով ու քանդակներով, նաև գրչությամբ խիստ նմանեցված է

---

54 «Գնդուն», թիվ 1—10, Վենետիկ, 1903, էջ 54։ Հ. Տէր-Հակոբյան. Մոռացված շիրիմ.—«Հանդես ամսօրյա», Վիեննա, 1913, էջ 303։ Ե. Լալայան. Կապան կամ Ղափան. Մելիքություններ.—«Ազգագրական հանդես», XII գիրք, Թիֆլիս, 1905, էջ 188։ Նույնի՝ Գողթն. Օրդուրագի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան (արտատպված «Ազգագրական հանդես»-ի XI և XII գրքերից), Թիֆլիս, 1912, էջ 73։ Ս. Խանզադյան. Ինչ են պատմում բարերը.— «Սովետական Հայաստան», 1981, № 6, էջ 30։

55 Տե՛ս Արդամ Այվազյան. Ագուլիս (պատմամշակութային հուշարձաններ). Երևան, 1984, էջ 88 (լուսանկար 16 բ)։

56 П. Т. Арутюнян. Освободительное движение..., с. 270—271.

57 Նույն տեղում, էջ 272։ Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի..., էջ 178։

58 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1960, էջ 64 (լուսանկ. տախտակ XVI 56). հմմտ. Ե. Լալայան. Կապան կամ Ղափան, էջ 197։

քպարապետի գերեզմանաքարին»[59]։ Մեր կարծիքով, տեղի է ունեցել հետևյալը. 1748 թ. (ՌՃՂԷ) զոհված մելիք Բարխուդարի հիշատակին դրված տապանաքարի հետ միասին, միևնույն վարպետի ձեռքով պատրաստվել է նաև Մխիթարի դերեզմանաքարը։ Հենց այդ ժամանակ էլ, այսինքն՝ Մխիթարի նահատակությունից մոտ երկու տասնամյակ անց (կամ ավելի ուշ), թույլ է տրվել այդ դեպքի սխալ արձանագրումը։ Այս ենթադրության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ Մխիթարի զոհվելուց անմիջապես հետո պարզապես վտանգավոր էր այդպիսի մի տապանաքարով բացեիբաց ցուցադրել նրա գերեզմանը, քանի որ Խնձորեսկի վրա օսմանցիների և Ղարաշոռլու քրդերի իրերահաջորդ ասպատակությունների ընթացքում[30] անխուսափելի էր շիրիմի պղծումը։ Ուստի և, նկատի ունենալով վերը կատարված ողջ քննությունը, ամենայն վստահությամբ եզրակացնում ենք, որ սխալ է ո՛չ թե «Պատմության», այլ տապանաքարի վրա նշված թվականը։

ДОСТОВЕРНОСТЬ И СТРУКТУРА ХРОНОЛОГИИ «ИСТОРИИ КАПАНЦЕВ»

А. М. АЙВАЗЯН

Резюме

В армянской исторической науке некоторыми учеными (П. Т. Арутюнян, А. Г. Иоаннисян, А. Г. Абраамян, В. М. Мартиросян) были высказаны веские сомнения по поводу достоверности основных хронологических данных «Истории капанцев», в том числе дат смерти Давид-бека и Мхитара спарапета (1728 и 1730 гг. передвигались соответственно на 1725—1726 и 1727 гг.). Эта позиция была подвергнута серьезной критике (А. Мирзоян, В. Р. Григорян), которая, однако, оставаясь в рамках первого, несовершенного издания «Истории» (1871 г., Вагаршапат) не привела дискуссию к убедительному результату. Как впоследствии было замечено (А. Д. Папазян), новое полное издание «Истории» (1978 г., Венеция), позволяет опровергнуть выдвинутые против ее хронологии аргументы.

Настоящая статья, выявляя принципы построения хронологии Гукасом Себастаци, а также привлекая дополнительный исторический материал, всесторонне освещает данную проблему, приходя к выводу об аутентичности хронологии «Истории капанцев». В ней, в частности, устанавливается время: 1) начала блокады турецкими войсками Капана (Сюника) и Карабаха (Арцаха)—март 1726 г., 2) присоединения к капанской группировке турецких войск вспомогательных сил во главе с Али-пашой и Бекир-пашой—ноябрь 1726 г., 3) начала первой осады Алидзора—26 февраля 1727 г. (по юлианскому календарю). Утверждается, что в конце 1726 г. Давид-бек через прибывшего в это время в Гилян картлийского царя Вахтанга VI, вошел в контакт с шахом Тахмаспом II.

---

59 «Դիվան հայ վիմագրության», պ. II, էջ 63։ Մխիթար սպարապետի շիրմաքարի «հյուսիսային կողին քանդակված են երեք հեծյալներ, առաջինն ունի ձեռին կեռ սուր, երկրորդը հրացան՝ դեպի ետ դարձրած. երրորդը, որ գնում է դրանց առաջից, սպարապետն է, ձեռքին ունի նիզակ, որով սպանում է գալարվող վիշապին։ Սպարապետին դիմավորում են երկու հետիոտն մարդիկ, առաջինի մի ձեռքին հրացան է, մյուսին՝ ծաղիկ. երկրորդը հոգևորականի զգեստով է, ձեռքին դրոշակ, որը պսակվում է խաչով» (նույն տեղում, էջ 64)։

60 Տե՛ս Աբրահամ Կրետացի. Պատմութիւն։ Քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի. Երևան, 1973, էջ 150—151։